

րում էին եթէ ոչ հայերէն, գէթ թուրքերէն լեզուին, մօտիկ էին եւ ամէն կերպ աշխատում էին դրաւել հայ հոգեւորականութեան ու ժողովրդի համակրանքը: Նրանք թափանցել էին Հայաստանի խորքերը, ուսուցչութիւն էին անում հայ հոգեւորական դպրոցներում, ինչպէս, օրինակ, Կլեմանտ Գալանը կամ Պաոլօ Պիրոմալլին, որ դասաւանդում էր էջմիածնի ժառանգաւորաց վարժարանում Մովսէս եւ Փիլիպպոս կաթողիկոսների օրով եւ ուսուցիչ է եղել հայերէն Աստուածաշնչի անդրանիկ տըպագրիչ Ռական վարդապետին: Սրանցից Գալանը, հետագային, հրատարակեց իր երեք հատորանոց նշանաւոր դիրքը, որ լիքն է սոււս մեղադրանքներով հայոց եկեղեցու հերձուածքի եւ հերետիկոսութեան մասին*):

Առհասարակ, հայերի վրայ ազդելու եւ քարոզչութեան ձեւերը երբեմն լինում էին չափազանց տարօրինակ: Յիշեմ հետեւեալ օրինակը. մի շարք հայ պատմագրերի մօտ կայ այն ցուցմունքը, որ հայերի քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ, Գրիգոր Լուսաւորիչն ու Տըրդատ թագաւորը միասին ճամբորդութիւն կա-

տարեցին դէպի Հռոմ, տեսնուելու համար Կոստանդին կայսեր եւ Սիլվեստր պապի հետ: Այս ցուցմունքը հնարաւորութիւն է տուել կաթողիկ քարոզիչներին յօրինել «Դաշանց Թուղթը» հայ եւ հռոմէական եկեղեցիների միջեւ, որով հայոց եկեղեցին ճանաչում է հռոմէական եկեղեցու առաջնութիւնը եւ ենթարկւում է նրան: Այդ դաշինքը առաջ լոյս տեսաւ իտալերէն լեզուով, ապա՝ հայերէն «ընագրում»: Ներկայումս կաթողիկ գրողներն էլ ընդունում են այդ «դաշինքը» կեղծ, բայց իր ժամանակին նա բաւական մեծ ծառայութիւն մատուցեց կաթողիկ միսիոնարներին եւ ուժգնօրէն ազդում էր հայ հոգեւորականութեան վրայ:

Ազգային դաւանանքին հետեւող հայերի եւ հայ-կաթողիկեաների միջեւ տեղի ունեցած առաջին իսկ բախման ժամանակ, աւելի ճիշդ՝ աշխարհիկ իշխանութեան առաջին իսկ ճնշման դէպքում կաթողիկ հայերի վրայ, իրենց բացառապատէն կաթողիկ ցոյց տուող, բայց հարբատութեան ու աչքի ընկնող դիրքի տէր անձինք դուրս եկան բաւական զօրաւոր, որպէսզի խուսափին հալածանքներից, իսկ ոչնչով աչքի չլարնող հայ ընտանիքները, որոնք թէեւ համակրում էին կաթողիկութեան, թէ՛ իրենք ընդունանում էին իրենց կաթողիկ ցոյց տալուց եւ թէ՛ կառավարութեան կամ պաշտպան միսիոնարների համար առանձին հետաքրքրութիւն չէին ներկայացնում: Ուստի եւ հայածանքները դիպան նախ եւ առաջ մի խումբ մը տաւորականութեան, որ համակրում էր կաթողիկեաներին, որպէս իրենց ուսուցիչներին:

Սրանց դէմ յարուցուած հալածանքները անմիջապէս առաջ բերին հովանաւորութիւն եւ աջակցութիւն միսիոնարների եւ այս վերջինների միջոցով Փրանսական դեսպանատան կողմից: Նրանք հալածողներին պահում էին իրենց եկեղեցիներում եւ նոյնիսկ դեսպանութեան շէնքին մէջ, օգտուելով անձեռնմխելիութեան իրաւունքից, կերակրում էին նրանց եւ նրանց ընտանիքները եւ հէնց առաջին յարժար առիթից օգտուելով՝ Փրանսական կամ Յրանսայի բարեկամ ուրիշ ազգերի նաւերով դուրս էին բերում Պոլսից կամ նոյնիսկ Թուրքիայի սահմաններից: Ի հարկէ, նման աջակցութեան հետեւանքը լինում էր այն, որ միսիոնարներին

*) C. Galanus, Conciliatio ecclesiac Armenae cum Romana, 3 Vol., Roma, 1658-1659: Գիրքը հրատարակուեց հայերէն եւ լատիներէն լեզուներով: Եկեղեցական յայտնի պատմարան Cappelletti-ն այսպէս է արտայայտուում այդ գրքի մասին. «Լատիներէն բնագրում, հեղինակը, համոզուած որ հայերը չեն հասկանայ, ծաղրում ու զրպարտում է հայ ժողովուրդը, եկեղեցին, սուրբ հայրերին եւ հայ ուսեալ վարդապետներին. հայերէն բնագրում, համոզուած որ եւրոպացիք նրանով չեն հետաքրքրուի, ո՛չ մի այդպիսի խօսք չի անում»: Cappelletti, Storia di Republica di Venezia. Venezia, 1854 Vol. 11, pag. 217:

Հետաքրքրական է, որ Պիրոմալլին ոչ միայն չհերքեց Գալանի գաղափարները, այլ եւ անմիջապէս Գալանի գրքի լոյս տեսնելուց յետոյ, ամբաստանեց նրան բանադրութեան մէջ: Նրանք բաւական երկար ժամանակ իրար հետ բանակոխու ունեցան գրքի հեղինակի ու լինելու մասին: Տե՛ս Nomenclator Litteraris, t. IV, p. 118-119: